ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 108-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆՆ ԱՃՈՒՐԴ- ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է**.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող կիսակառույց մշակույթի տունը /մակերեսը՝ 3157,2 քմ, կադաստրային համարը՝ 111-002-001/ բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,63 հա հողամասով /ծածկագիր՝ 03-003-111-002/ աճուրդ վաճառքի միջոցով օտարելու հետևյալ նպատակով և պայմանով.

1/ Գնորդը պարտավորվում է վերը նշված տարածքում առնվազն 7 տարվա ընթացքում կառուցել առնվազն 250 քմ միջազգային ստանդարտներին համապատասխան մշակութի տուն՝ նվիրաբերությամբ համայնքին փոխանցելով,

2/ Կառուցվող մշակույթի տան նախագիծը համաձայնեցնել համայնքի ղեկավարի հետ

3/ Աճուրդի արդյունքներով հաղթած ճանաչված անձի հետ կնքել պայմանագիր՝ սահմանելով այլ պայմաններ:

2. Հաստատել մեկնարկային գինը՝ կիսակառույց շինության գինը ըստ 12.05.2020 թվականի գնահատման արժեքի,իսկ հողը՝ տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ